Միջոցառման հյուրերին դիմավորողին մուլտիհերոսմները, որոնց հագուստները մարմնավորում էին կենտրոնի 2 /աղջիկ/ սաներ:
Միջոցառման բոլոր մասնակիցներին և հյուրերին տրվեցին տվյալ խմբին բնորոշող այցեքարտեր, ներկայացվեց միջոցառման բնույթը:
Այս աշխատանքների իրականացումը իրականացվել; է կենտրոնի 5/ 3 տղա, 2 աղջիկ/ երեխայի կողմից՝ սոցիալական աշխատողի ուղղորդմամբ:
• **Մեր համայնքը**: Այս խմբում երեխաները իրականացրեցին Գավառ համայնքի քարտեզագրում և դիդակտիկ պաստառների միջոցով ներկայացրեցին կենտրոնի գործունեության ընթացքում կենտրոնի սաների, համայնքի բնակիչների և Գավառի համայնքապետարանի հետ համագործակցությամբ բարեկարգված 7 տարածքները:
7 / 4 աղջիկ, 3 տղա/ երեխա հանդես եկավ 1 տարածքի բարեկարգման աշխատանքների ներկայացմամբ: Միջոցառմանը մասնակից հյուրերին երեխաները մեծ ոգևորությամբ ներկայացրեցին տվյալ տարածքում կատարված աշխատանքները:
Այս խմբում մասանկիցները ձեռք բերեցին քարտեզագրման հմտություններ և կարևորեցին շրջակա միջավայրի մաքրությունը, հագատար վերաբերմունքը՝ համայնքի և հայրենիքի հանդեպ:
Հատկանշական է՝ որ միջոցառման իրականացման տարածքի բարեկարգման և մաքրման աշխատանքները իրականացվել էին ծրագրի շահառուների աջակցությամբ:
Խմբի աշխատանքները համակարգեցին կենտրոնի սոցիալական աշխատողը և համակարրգողը:
• **TED ելույթներ**: Այս խմբում կենտրոնի ներկա և շրջանավարտ սաները ներկայացրեցին մոտիվացրող ելույթներ, պատասխանեցին հյուրերի հարցազրույցներին: Գեղարվեստական կատարումներով հանդես եկան կենտրոնի սաները, ովքեր հաճախում են Լունա պարային համույթ: Պարի խումբը հանդես եկավ **10** գեղարվեստտական կատարումներով:
Մոտիվացրող ելույթներով հանդես եկավ ծրագրի 5 շահառու երեխա 3 տղա 2 աղջիկ, 5 շրջանավարտ 1տղա, 4 աղջիկ:
Ելույթները բանախոս երեխաները պատրաստել էին իրենց բառերով ու պատկերացումներով, նրանք նաև պատասխանեցին բլից հարցերին, որոնք պատարստել էին միջոցառումը վարող իրենց հասակակից ընկերները:
Խմբի աշխատանքները համակարգեցին կենտրոնի սոցիալական աշխատողը և պարի խմբավարը:
• **Իմ մոլորակը:** Այս խմբում կազմակերպվեց արտթերապիա, որի միջոցով երեխաները պատկերեցին իրենց մոլորակը՝ իրենց աչքերով: Կենտրոնի հոգեբանը երեխաների հետ համատեղ զարդարել էր արտթերապիայի հատվածը երեխաների կողմից պատրաստած <<Իմ Իրավունքը>> թեմատիկ պաստառներով: Խմբի **10 /5 աղջիկ, 5 տղա/** մասնակիցներին տրվել էին Ա3 թղթեր, գրենական պարագաներ՝ իրենց պատկերացումները թղթին պատկերելու համար: Աշխատանքների ավարտին տեղի ունեցավ հոգեբանի կողմից վելուծություն: Այս խմբում ներառված **3/ 2 աղջիկ, 1 տղա/** երեխաները գիպսե արձանիկների վրա գունավորեցին Փոքրիկ Իշխան պատվածաքի հերոսներին, որի անունով կոչվում է կենտրոնը:
Միջոցառումը նպաստեց համայնքային մշակութային կյանքին երեխաների ընգրկվածության ապահովմանը, խթանեց մասնակիցների սոցիալական, հաղորդակցման, ստեղծագործական հմտությունների զարգացմանը: Միջոցառման արդյունքում նաև արժևորվեցին երեխաների խնամքի ծառայությունները, որոնք նպաստում են ընտանիքների հզորացմանը և վերջիններիս գունեղ մանկության կերտմանը:
Միջոցառումը իրականցմանը ներգրավվել են կենտրոնի բոլոր երեխաներըէ ներառյալ հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող երեխաները, որի արդյունքում երեխաները դարձան առավել համախմբված, միասնական և զարգացավ նրանց թիմային աշխատանքի հմտությունները և ստեղծագործական մտածողությունը: